

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
1 հունիսի 2004 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մայիսի 2004 թվականի N 747-Ն

**1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՂԲԵՋԱՆԻՑ ԲՈՆԱԳԱՂԹԱԾ ԱՆՁԱՆՑ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրին համապատասխան, 1988-1992 թվականներին Աղբբեջանից բռնագաղթած՝ բնակարանի առաջնահերթ կարիք ունեցող անձանց մշտական օթևանով ապահովելու նպատակով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացման քաղաքականության 2003-2006 թվականների հիմնական ուղղությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել 1988-1992 թվականներին Աղբբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Ստեղծել 1988-1992 թվականներին Աղբբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման և ծրագրի իրականացման աշխատանքները համակարգող հանձնաժողով ու հաստատել դրա կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2004 թ. մայիսի 27
Երևան

Հավելված N 1
**ՀՀ կառավարության 2004 թվականի
մայիսի 20-ի N 747-Ն որոշման**

Ա Ռ Ա Ջ Ն Ա Հ Ե Ր Թ Ծ Ր Ա Գ Ի Ր

**1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՂԲԵՋԱՆԻՑ ԲՈՆԱԳԱՂԹԱԾ ԱՆՁԱՆՑ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ**

Ի. ՆԱԽԱԲԱՆ

1988-1992 թթ. միջլեռնակական հակասությունների սրման և ազգամիջյան բախումների հետևանքով Ադրբեջանից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետությունում ապաստանած փախստականների հիմնախնդիրներից իր արությամբ կարևորվում է նրանց բնակարանային ապահովության խնդիրը:

Այդ խնդրի լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը մշակել էր համապատասխան ծրագիր, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թ. դեկտեմբերի 14-ի N 56 արձանագրությամբ հավանության էր արժանացել:

Այդ ծրագիրը ներառում էր ազգամիջյան բախումներից տուժած և Ադրբեջանից բռնի տեղահանված ու Հայաստանում ապաստանած, մինչև այժմ մշտական օթևան չունեցող բոլոր փախստականների բնակարանային հիմնախնդիրը և նախատեսվում էր ծրագրի իրականացման արդյունքում հանրապետությունում հիմնովին լուծել փախստականների բնակարանով ապահովելու խնդիրը:

Սակայն նախորդ 3 տարում, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ մեծածավալ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով այն չի իրականացվել:

Հաշվի առնելով նման ընդհանուր ծրագրի իրականացման դժվարությունները՝ թե՛ պահանջվող ֆինանսական միջոցների մեծ ծավալի (ավելի քան 50,0 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ) և թե՛ իրականացման ժամկետների տեսակետից, անհրաժեշտություն է առաջացել և նպատակահարմար է փախստականների բնակարանային ապահովության խնդիրը լուծել ոչ թե մեկ ընդհանուր ծրագրի շրջանակներում, այլ այն տարանջատել ըստ կարիքավորության և փուլերի՝ մշակելով առանձին համապատասխան ենթաօրագրեր, որոնց լուծումն ավելի իրատեսական է:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, կարևորելով փախստականների բնակարանային ապահովության հիմնախնդրի լուծման անհրաժեշտությունը և ելնելով նշված նկատառումներից, իր գործունեության ծրագրում, որը 2003 թվականի հունիսի 20-ին հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից, ամրագրել է դրույթ, որը վերաբերում է Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և բնակարանի առաջնահերթ կարիք ունեցող փախստականների բնակարանային ապահովման ծրագրի մշակմանն ու 2,5-3 տարվա ընթացքում դրա իրականացմանը:

Փախստականների բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մշակման հարցն արդեն իսկ ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում և բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրից:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2003 թվականի սեպտեմբերի 10-ի N 430-Ա որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության պետի ղեկավարությամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որն էլ մշակել է 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր):

II. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՌԿԱ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

1988-1992 թվականներին ազգամիջյան հակամարտության հետևանքով ընդամենը 4 տարվա ընթացքում հարևան Ադրբեջանից բռնի տեղահանվեց ավելի քան կես միլիոն հայ, որից 360 հազարը հանգրվանեցին Հայաստանի Հանրապետությունում: 1997 թվականին իրականացված հաշվառման տվյալներով Հայաստանում բնակվող փախստականների թիվը կազմում էր ավելի քան 310,0 հազար:

Բռնագաղթի առաջին իսկ օրերից հանրապետության կառավարությունը և տեղական իշխանության մարմինները մեծ ծավալի աշխատանքներ են իրականացրել փախստականների ընդունման, տեղաբաշխման-տեղավորման և այլ առաջնահերթ խնդիրների հնարավոր լուծման ուղղությամբ:

90-ական թվականների կեսերից, երբ ակնհայտ դարձավ, որ փախստականների անվտանգ ու կամավոր վերադարձն իրենց նախկին բնակության վայրեր իրատեսական չէ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը նրանց նկատմամբ որդեգրեց ինտեգրման քաղաքականություն: Եվ այդ գործընթացում իրենց ծանրակշիռ ներդրումներն են ունեցել միջազգային ու հասարակական տարբեր կազմակերպություններ, առանձին պետություններ և անհատ բարեգործներ՝ իրականացնելով բազմաթիվ ծրագրեր՝ ուղղված փախստականների հոգսերի թեթևացմանը, հանրապետությունում սոցիալ-տնտեսական լարվածության թուլացմանը:

Չնայած իրականացված աշխատանքներին՝ այնուհանդերձ, փախստականների որոշակի մասի սոցիալ-տնտեսական իրավիճակը շարունակում է մնալ մտահոգիչ:

Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները՝ փախստականների շրջանում գործազրկության մակարդակը տեղացիների համեմատ բարձր է ավելի քան 1,5 անգամ, գործարարությամբ զբաղվողների թիվը ցածր է 1,7 անգամ, 3 անգամ պակաս է մշտական աշխատանք ունեցողների թիվը, կրթական, առողջապահական ծառայություններից օգտվելու մատչելիությամբ նրանք նույնպես զիջում են տեղացիներին: Դրությունը հատկապես անմխիթար է բնակարանային ապահովության բնագավառում:

Ներկա դրությամբ փախստականների շուրջ 10,0 հազ. ընտանիք ապահովված չէ մշտական բնակարանով:

Նշված հիմնախնդիրների առկայությունը խոչընդոտում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Ադրբեջանից բռնագաղթած փախստականների ինտեգրման քաղաքականության լիարժեք իրականացմանը:

III. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Փախստականների ինտեգրման ճանապարհին ամենամեծ խոչընդոտը բնակարանային հիմնախնդիրն է՝ թեկուզ և այն պարզ բացատրությամբ, որ Հայաստան ներգաղթելուց հետո 15 տարի շարունակ բնակվելով միայն տարրական պայմաններից զուրկ ժամանակավոր կացարաններում և չունենալով մշտական օթևան, մայր Հայրենիքում գտնվելու և այնտեղ ամրանալու հոգեբանական զգացումը նրանց մոտ, բնականաբար, թույլ արտահայտված կլինի:

Նշված դրույթի իրավացիությունն ապացուցում է նաև այն իրողությունը, որ այն վայրերում, որտեղ իրականացվում է բնակարանային շինարարություն, փախստականները զանգվածաբար քաղաքացիություն են ձեռք բերում:

Այսօր մշտական կացարանով չապահովված փախստականները տեղավորված են հանրակացարաններում, հյուրանոցներում, առողջարաններում, հանգստյան տներում, դպրոցներում, մանկապարտեզներում, հիվանդանոցներում, հիմնարկ-ձեռնարկությունների վարչական շենքերում և հանրային օգտագործման այլ տարածքներում (այսուհետ՝ ժամանակավոր կացարաններ), ապրում են վագոն-տնակներում, վարձով, բարեկամների տանը և հարմարեցված այլ շինություններում:

Մշտական օթևանով չապահովված փախստական ընտանիքների շուրջ 40 տոկոսը բնակվում է հանրապետության ամբողջ տարածքով սփռված ժամանակավոր կացարաններում և վագոն-տնակներում, որոնց մի մասը տեղադրված է տնամերձ հողամասերի վրա:

Ժամանակավոր կացարանները գտնվում են տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ և անցած ժամանակաշրջանում այդ կացարանների տեխնիկական վիճակի պահպանության և սպասարկման համար անհրաժեշտ գումարներ չեն հատկացվել, ինչի հետևանքով դրանք հայտնվել են տեխնիկապես անմխիթար վիճակում, չեն բավարարում սանիտարահիգիենիկ նվազագույն նորմերի պահանջներին: Այդ շենքերի մի մասը գտնվում է վթարային վիճակում և ապրելու համար խիստ վտանգավոր է:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» N 682 որոշմամբ հաստատված ծրագրով նախատեսվում է Երևան քաղաքում քանդման ենթակա տներում 5 տարվանից ոչ պակաս բնակվող և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության կողմից հաշվառված 214 փախստական ընտանիքների պետական օժանդակությամբ բնակարաններով ապահովում, որից՝ 54 ընտանիք արդեն իսկ ստացել է նման օժանդակություն:

Մինչև այժմ փախստականների բնակարանային ապահովության խնդիրը լուծվել է հիմնականում 2 ճանապարհով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին և միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ:

Առաջին ճանապարհով բնակարանով ապահովվել են շուրջ 300 փախստական ընտանիք, իսկ երկրորդով (Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակ, Գերմանիայի և Նորվեգիայի կառավարություններ)՝ 3500 ընտանիք:

Ցավոք, բնակարանային շինարարության համար պետական կապիտալ ներդրումները դեռևս մեծ չեն և այդ խնդիրն էլ ավելի է բարդանում այն հանգամանքով, որ հանրապետությունում առկա են հազարավոր տեղացի ընտանիքներ, որոնք նույնպես ապահովված չեն բնակարանով:

Բնակարանային հիմնախնդրի առկայությունն ու դրա լուծված չլինելն է նաև այն հիմնական պատճառներից մեկը, որ տեղացի ազգաբնակչության հետ ունենալով միևնույն էթնիկ ծագումը, շատ դանդաղ է իրականացվում մեր հասարակության մեջ փախստականների ինտեգրացման գործընթացը: Դրանով էլ պայմանավորված է նաև

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ձեռք բերելու խնդրի նկատմամբ փախստականների կողմից դրսևորվող՝ կարելի է ասել «պասսիվ» վերաբերմունքը: Չնայած այն հանգամանքին, որ համեմատած մինչև 1999 թվականն ընկած ժամանակաշրջանի հետ, երբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն էր ընդունել ընդամենը 7,0 հազ. փախստական, վերջին 3-4 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած փախստականների թիվը շեշտակի մեծացել է և այն այժմ կազմում է շուրջ 65,0 հազար, այնուամենայնիվ, այդ գործընթացի նկատմամբ փախստականների վերաբերմունքն առայժմ մնում է ոչ այնքան «ակտիվ»:

Այս հանգամանքը մեկ անգամ ևս ապացուցում է այն իրողության ճշմարտացիությունը, որ հասարակությունում փախստականների ինտեգրման ճանապարհին, որը Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունն է փախստականների հարցում, հիմնական խոչընդոտը սոցիալ-տնտեսական այլ խնդիրների շարքում նրանց բնակարանային հիմնախնդրի առկայությունն է, որը փախստականների շրջանում առաջ է բերում արդարացի դժգոհություն և կարող է լրջորեն սրել սոցիալական լարվածությունը՝ նկատի ունենալով նրանց տեսակարար կշիռն ազգաբնակչության ընդհանուր թվաքանակում:

Ամենապարզ հաշվարկները վկայում են, որ փախստականների համար բնակարանային շինարարությունը նախորդ տարիների տեմպերով շարունակելու դեպքում խնդիրը հիմնովին կարող է լուծվել ոչ շուտ, քան 4-5 տասնամյակում:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով փախստականների բնակարանային հիմնախնդիրը մեկ ծրագրով և միանգամայա լուծման դժվարությունը, ինչպես նաև հաշվի առնելով հարցի ընդհանուր ծավալներն ու արժեքը՝ մշակվել է սույն ծրագիրը, որով նախատեսվում է առաջիկա 2,5-3 տարվա ընթացքում լուծել բնակարանի ամենակարիքավոր այն փախստական ընտանիքների բնակարանով ապահովման հարցը, որոնք բնակվում են ժամանակավոր կացարաններում և վազոն-տնակներում:

Սույն ծրագրով, որի հիմքում դրվել են որոշակի սկզբունքներ, սահմանվել են շահառուների ընտրության չափանիշները, նրանց բնակարանային ապահովության ուղղությունները, պահանջվող ֆինանսական միջոցների ծավալները, ինչպես նաև ծրագրի իրականացման կազմակերպումը:

IV. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվի առնելով փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարանների բնակկենցաղային անմխիթար պայմանները և ելնելով այդ կացարաններից ու վազոն-տնակներից փախստականների առաջնահերթ տեղափոխման անհրաժեշտությունից, ինչպես նաև տնամերձ հողամասերի վրա փախստականների կողմից կառուցված անավարտ տների շինարարությունն ավարտին հասցնելու և վերջիններիս հատկացնելու նպատակով բնակարանային ապահովության սույն ծրագրի շահառուներ են 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնազաղթած այն փախստական (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած նախկին փախստական) ընտանիքները, որոնք՝

- բնակվում են ժամանակավոր կացարաններում,
- բնակվում են իրենց հատկացված տնամերձ հողամասերում և այլ տարածքներում տեղադրված վազոն-տնակներում կամ բնակվում են տնամերձ

հողամասերի վրա եղած կիսակառույց տներում, որոնց տեխնիկական պայմանները հնարավորություն են տալիս դրանց շինարարությունը հասցնել ավարտի:

Նշված պայմաններում բնակվող ընտանիքներին ծրագրի շահառու ճանաչելու պարտադիր պայման է նաև Հայաստան բնագաղթվելուց հետո պետական կամ այլ միջոցներով բնակարան կամ տուն չստացած լինելը, Ադրբեջանում ունեցած բնակարանը կամ տունը չփոխանակած լինելը, ժամանակավոր կացարաններում հատկացված բնակելի տարածքները սեփականաշնորհած չլինելը (բացառությամբ, երբ փոխանակած տան խարխուլ ու քանդված լինելու պատճառով այդ ընտանիքն առնվազն 3 տարի բնակվում է ժամանակավոր կացարանում կամ վազոն-տնակում և երբ սեփականաշնորհած բնակելի տարածքը չունի առանձին խոհանոց և սանհանգույց):

Բացի նշված ընդհանուր պայմաններից ծրագրի շահառուների ընտրության հիմքում որպես չափանիշ համարվում է 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ (Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավոր կացարաններում և վազոն-տնակներում ապաստանած փախստական ընտանիքների բնակարանային պայմաններն ու նրանց ընտանիքների կազմը պարզելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության կողմից իրականացված ուսումնասիրության ժամանակաշրջանը) ժամանակավոր կացարաններում և վազոն-տնակներում փախստական ընտանիքների փաստացի բնակությունը:

Ծրագրում որպես շահառու ընտրված փախստական ընտանիքների կազմը սահմանվում է՝ ելնելով ուսումնասիրության ընթացքում արձանագրված ընտանիքի ներկա (փաստացի բնակվող) անդամների թվից:

Ընտանիքի ոչ ներկա անդամները դիտվում են շահառու և ընդգրկվում են տվյալ ընտանիքի կազմում, եթե նրանց բացակայությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայության կամ բուժման, կամ ուսման, կամ ազատազրկման վայրում պատիժը կրելու հետ:

Հանրապետության, մարզերի ու Երևան քաղաքի կտրվածքով ծրագրում որպես շահառու ընդգրկված՝ բնակարանի առաջնահերթ կարիքավոր ընտանիքների թիվը ներկայացված է N 1 աղյուսակում:

Ծրագրի իրականացման ընթացքում կարիքավոր ընտանիքների թիվն, ինչպես հանրապետության, այնպես էլ մարզերի կտրվածքով ենթակա է ճշտման:

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Փախստականների բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի իրականացման սկզբունքներն են՝

1. Բնակարանային ապահովության իրականացումը շահառուի բնակության փաստացի բնակավայրի սահմաններում կամ հնարավորինս դրա մերձակայքում
2. Բնակարանային ապահովության իրականացումը նվազագույն կոմունալ հարմարություններ ունեցող (խոհանոց և սանհանգույց) բնակարաններով
3. Բնակարանային ապահովության իրականացումը բնակության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների (էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, ջրահեռացում) ստեղծմամբ
4. Բնակարանային ապահովության իրականացում հետևյալ նորմերով՝
ա) բազմաբնակարան շենքերում՝

1-2 անձից կազմված ընտանիքներին՝ մեկսենյականոց բնակարան,
3-4 անձից կազմված ընտանիքներին՝ երկուսենյականոց բնակարան,
5-6 անձից կազմված ընտանիքներին՝ երեքսենյականոց բնակարան,
7-8 անձից կազմված ընտանիքներին՝ չորսսենյականոց բնակարան,
9-10 անձից կազմված ընտանիքներին՝ մեկական երկուսենյականոց և
երեքսենյականոց բնակարան,

11-12 անձից կազմված ընտանիքներին՝ երկու հատ երեքսենյականոց
բնակարան.

բ) առանձնատան (քոթեջի) կառուցման դեպքում՝

1-2 անձից կազմված ընտանիքների համար՝ մեկսենյականոց առանձնատուն,

3-4 անձից կազմված ընտանիքների համար՝ երկուսենյականոց առանձնատուն,

5-6 անձից կազմված ընտանիքների համար՝ երեքսենյականոց առանձնատուն,

7-8 անձից կազմված ընտանիքների համար՝ չորսսենյականոց առանձնատուն,

9-10 անձից կազմված ընտանիքների համար՝ հինգսենյականոց առանձնատուն:

Նշված նորմերի հիմքում դրվել է Միավորված ազգերի կազմակերպության
փախստականների գծով գերազույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և
փախստականների նորվեգական խորհրդի կողմից մինչև այժմ փախստական
ընտանիքների համար կառուցված քոթեջատիպ տների տիպերը:

5. Բնակարանային ապահովության ծրագրի իրականացման
հրապարակայնություն և թափանցիկություն:

VI. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ելնելով սույն ծրագրի իրականացման սկզբունքներից, նկատի ունենալով
բնակարանի կարիքավոր առանձին ընտանիքների (ժամանակավոր
կացարաններում, տնամերձ հողամասի վրա տեղադրված վագոն-տնակներում և
կիսակառույց տներում բնակվողներ) բնակարանով ապահովման
առանձնահատկությունները և նպատակ ունենալով ապահովել ծրագրի
արդյունավետությունը՝ հնարավորինս պակաս ֆինանսական միջոցներ ծախսելու
տեսակետից այն իրականացվելու է հետևյալ ուղղություններով՝

ա) բնակարանների գնման (սերտիֆիկատի միջոցով) եղանակով՝ կապահովվեն
այն ընտանիքները, որոնք բնակվում են ժամանակավոր կացարաններում և այն
ընտանիքները, որոնք բնակվում են վագոն-տնակներում ու չունեն տնամերձ
հողամաս.

բ) առանձնատների (քոթեջների) կառուցման ճանապարհով՝ շինարարության
ճանապարհով բնակարանային ապահովությունը կիրականացվի այն ընտանիքների
համար, որոնք բնակվում են իրենց տնամերձ հողամասերում տեղադրված վագոն-
տնակներում կամ այդ հողամասերի վրա կառուցված անավարտ (կիսակառույց)
տներում.

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի
«1988-1992 թթ. Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի
Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց՝ պետական, բյուջետային
հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի
տարածքների սեփականաշնորհման կարգը հաստատելու մասին» N 404 որոշմամբ
սահմանված կարգով.

դ) պետական հիմնարկների տնօրինության հանրակացարանային բնակելի տարածքների՝ այդ բնակարաններում բնակվող փախստական ընտանիքներին սեփականաշնորհման.

ե) պետական սեփականության առանձին շենքերի՝ այդ նպատակով հատկացման.

զ) պետական սեփականության շենքերի և շինությունների մասնավորեցման գործընթացում՝ գնորդի միջոցով այդ շենքերում ժամանակավոր բնակվող փախստական ընտանիքներին բնակարանային պայմաններով ապահովելու միջոցով:

VII. ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ

Սույն ծրագրի իրականացման արդյունքում 3470 փախստական ընտանիք կապահովվի մշտական օթևանով, որի համար պահանջվում է 16201242 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Այդ թվում՝ նշված ընտանիքներից 252-ի բնակարանային խնդիրը կլուծվի առանձնատների (քոթեջների) շինարարության միջոցով, որի համար կպահանջվի 1684750 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ և 3218 ընտանիք բնակարանով կապահովվի բնակարանի գնման վկայագրերի (սերտիֆիկատի) տրամադրման միջոցով, որի համար կպահանջվի 14516492 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Ծրագրի վրա ծախսվող ֆինանսական միջոցների հաշվարկն ըստ իրականացման ուղղությունների ներկայացված է NN 2 և 3 աղյուսակներում: Նշված հաշվարկի համար հիմք են հանդիսացել՝

1. Ժամանակավոր կացարաններում, վագոն-տնակներում և իրենց տնամերձ հողամասերում եղած կիսակառույց տներում ապրող փախստական ընտանիքների՝ սույն ծրագրի շահառուների թիվը, որն ստացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության կողմից 2003 թվականի մայիս-հուլիս ամիսներին հանրապետության ամբողջ տարածքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում:

Նշված ուսումնասիրությունների արդյունքների մշակման հիման վրա Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ ստեղծվել է տվյալների համակարգչային շտեմարան և վարչությունում առկա են սույն ծրագրով շահառու համարվող փախստական ընտանիքների թիվը, նրանց բնակության վայրի, ժամանակավոր կացարանի տիպի, ընտանիքի կազմի, ընտանիքի անդամների տարիքի վերաբերյալ տեղեկությունները՝ հանրապետության մարզերի (Երևան քաղաքի), քաղաքային, գյուղական և համայնքների կտրվածքով.

2. Բնակարանի գնման վկայագրի (սերտիֆիկատի) արժեքը, որը սահմանվել է տվյալ տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների ձևավորված շուկայական միջին գնին համարժեք՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2003 թվականի առաջին 9 ամսվա միջինացված տվյալներով 1 քառ. մետրի հաշվարկով (աղյուսակ N 4):

Ընդ որում, Երևանում, որպես հաշվարկի հիմք, ընդունվել է Ավան թաղային համայնքում ձևավորված գինը՝ 1 քառ. մետրը՝ 125 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:

Իսկ այն համայնքների համար, որոնց վերաբերյալ չկան կադաստրի տվյալներ բնակարանի գնի մասին, հաշվարկի համար հիմք է հանդիսացել տվյալ համայնքի նախկին վարչական շրջանի շրջկենտրոնում ձևավորված գինը: Նույն պատճառով Ախուրյանի և Ամասիայի տարածաշրջանների համար հաշվարկի համար հիմք է հանդիսացել Գյումրի քաղաքում ձևավորված շուկայական միջին գինը, Արագածի տարածաշրջանի համար՝ Ապարան քաղաքում ձևավորված շուկայական միջին գինը, Բաղրամյանի տարածաշրջանի համար՝ Արմավիր քաղաքում ձևավորված շուկայական միջին գինը, իսկ Ճամբարակի տարածաշրջանի համար՝ Վարդենիս քաղաքում ձևավորված շուկայական միջին գինը:

Հարկ է նշել, որ Երևանում մեկսենյականոց բնակարանի գինը համապատասխանում է 45 քառ. մետր տարածքին, երկուսենյականոցինը՝ 65 քառ. մետր, երեքսենյականոցինը՝ 85 և չորսսենյականոցինը՝ 105 քառ. մետր:

Երևանից բացի այլ տարածքներում դա կատարվել է համապատասխանաբար՝ 40, 60, 80 և 100 քառ. մետր հաշվարկով.

3. Առանձնատների (քոթեջների) շինարարության հետևյալ արժեքները՝ մեկսենյականոց առանձնատուն՝ 5250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, երկուսենյականոց առանձնատուն՝ 7000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, երեքսենյականոց առանձնատուն՝ 8500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, չորսսենյականոց առանձնատուն՝ 9500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, հինգսենյականոց առանձնատուն՝ 10500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:

Նշված հաշվարկի հիմքում ընկած է Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գծով գերազույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և փախստականների նորվեգական խորհրդի կողմից հանրապետության տարածքում մինչև այժմ (1995-2003 թթ.) առանձնատների (քոթեջների) կառուցման համար կատարված ֆինանսական միջոցների փաստացի միջին ծախսը՝ ըստ դրանց տիպերի.

4. Սույն ծրագրի 5-րդ բաժնով սահմանված՝ բնակարանով ու առանձնատներով (քոթեջներով) ապահովման նորմերը՝ ելնելով ընտանիքի անդամների թվից.

5. Սույն բաժնի 2-րդ կետում նշված տվյալները ծրագրի իրականացման ընթացքում ենթակա են ճշտման՝ ելնելով ծրագրի իրականացմանը նախորդող եռամսյակի ընթացքում ձևավորված բնակարանների շուկայական միջին գներից:

VIII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Առաջնահերթ ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման և ծրագրի իրականացման աշխատանքների համակարգումը կատարելու է համապատասխան հանձնաժողովը:

Սույն ծրագրի յուրաքանչյուր ուղղության իրականացման անհրաժեշտ աշխատանքները համակարգելու է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը:

Հանձնաժողովի աշխատանքներին որպես դիտորդներ կարող են մասնակցել Համաշխարհային բանկի, Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության, Միջազգային արժույթային հիմնադրամի, Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գերազույն հանձնակատարի, օտարերկրյա պետությունների և միջազգային այլ դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

Նկատի ունենալով ներկայացված ծրագրի ծավալն ու դրա իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների չափը և ելնելով ծրագրի իրականացման հետ կապված պահանջվող գործառույթները կանոնակարգելու անհրաժեշտությունից՝ կարող է ստեղծվել ծրագրի իրականացման աջակցության խորհուրդ՝ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկմամբ:

Խորհուրդը համակարգելու է ծրագրի ֆինանսական աջակցության ապահովման (դոնոր կազմակերպությունների հետ կապի ստեղծում), դրա իրականացման ընթացքի և հսկողության հետ կապված գործառույթները:

Ծրագրի իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների առկայության դեպքում, դրանով նախատեսված՝ բնակարանով ապահովման գործառույթները (մասնավորապես՝ կապված բնակարանի գնման վկայագրերի, առանձնատների (քոթեջների) շինարարության և ծրագրի իրականացման փուլերի հետ) անմիջականորեն իրականացնելու համար, ելնելով առկա ֆինանսական միջոցների ծավալից, սահմանված կարգով կարող է ստեղծվել ծրագրի իրականացման գրասենյակ:

Չնայած Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն ծրագրի համար արդեն իսկ նախատեսել է ավելի քան 5,0 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ բյուջետային ֆինանսավորում, այնուամենայնիվ երկրի տնտեսության զարգացման ներկա մակարդակի պայմաններում նման ծրագրի իրականացումը միայն ներքին ռեսուրսների հաշվին առաջիկա տարիներին իրատեսական չէ:

Ուստի բնակարանային առաջնահերթ ծրագրի իրականացման համար պահանջվող մնացած ֆինանսական միջոցներն անհրաժեշտ է համալրել ներքին և արտաքին այլ աղբյուրների հաշվին:

Այդ իմաստով ծրագրի իրականացմանն աջակցելու համար ակնկալվում է միջազգային հանրության, Համաշխարհային բանկի, Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության, Միջազգային արժույթային հիմնադրամի, Եվրոպայի խորհրդի զարգացման բանկի, Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի և օտարերկրյա պետությունների ֆինանսական աջակցությունը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Աղյուսակ N 1

**1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՂԲԵՋԱՆԻՑ ԲՈՒՆԱԳԱՂԹԱԾ ԱՆՁԱՆՑ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԻ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՏՐՎԱԾՔՈՎ
ԾՐԱԳՐՈՒՄ ՈՐՊԵՍ ՇԱՀԱՌՈՒ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ
ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ**

հանրապետությունում

այդ թվում՝

- Արագածոտնի մարզ - 119 ընտանիք
- Արարատի մարզ - 440 ընտանիք
- Արմավիրի մարզ - 219 ընտանիք
- Գեղարքունիքի մարզ - 52 ընտանիք
- Լոռու մարզ - 116 ընտանիք
- Կոտայքի մարզ - 756 ընտանիք
- Շիրակի մարզ - 70 ընտանիք
- Սյունիքի մարզ - 145 ընտանիք
- Վայոց ձորի մարզ - 14 ընտանիք
- Տավուշի մարզ - 81 ընտանիք
- Երևան քաղաք - 1458 ընտանիք

Աղյուսակ N 2

1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի

Հ Ա Շ Վ Ա Ր Կ

1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ԲՈՒՆԱԳԱՂԹԱԾ ԱՆՁԱՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ

ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐԻ (ՔՈԹԵՋՆԵՐԻ) ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի, այդ թվում՝ տարածաշրջանի անվանումները	Ընտանիքների կազմը՝ անձերով							
	1-2 անձից կազմված ընտանիքներ		3-4 անձից կազմված ընտանիքներ		5-6 անձից կազմված ընտանիքներ		7-8 անձից կազմված ընտանիքներ	
	թիվը	մեկ-սենյականոց առանձնատան արժեքը՝ 5250 ԱՄՆ-ի դոլար հաշվարկով պահանջվող գումարը	թիվը	երկու-սենյականոց առանձնատան արժեքը՝ 7000 ԱՄՆ-ի դոլար հաշվարկով պահանջվող գումարը	թիվը	երեք-սենյականոց առանձնատան արժեքը՝ 8500 ԱՄՆ-ի դոլար հաշվարկով պահանջվող գումարը	թիվը	չորս-սենյականոց առանձնատան արժեքը՝ 10000 ԱՄՆ-ի դոլար հաշվարկով պահանջվող գումարը
<i>Սյունիք</i>	1	5250						
Գորիսի տ/շ*	1	5250						
<i>Արմավիր</i>	9	47250	6	42000	7	59500	1	
Արմավիրի տ/շ*	1	5250						
Էջմիածնի տ/շ*	8	42000	3	21000	5	42500	1	90000

Բաղրամյանի տ/2** 3	21000	2	17000					
<i>Արարատ</i>	34	178500	35	245000	24	204000	6	
Վեդու տ/2*	3	15750	3	21000	1	8500	2	19
Արտաշատի տ/2*	1	5250	5	35000	4	34000	1	9
Մասիսի տ/2*	30	157500	27	189000	19	161500	3	28
<i>Արագածոտն</i>	12	63000	3	21000	1	8500		
Աշտարակի տ/2*	10	52500	3	21000				
Ապարանի տ/2*	2	10500 1	8500					
<i>Լոռի</i>	13	68250	19	133000	13	110500	1	
Վանաձորի տ/2*	3	15750	1	7000	2	17000		
Ստեփանավանի տ/2*	2	10500	3	21000				
Սպիտակի տ/2*	6	31500	9	63000	7	59500		
Ալավերդու տ/2*	2	10500	6	42000	4	34000	1	9
<i>Շիրակ</i>	2	10500	1	7000			1	
Ախուրյանի տ/2**	1	5250	1	7000			1	9
Արթիկի տ/2*	1	5250						
<i>Կոտայք</i>	31	162750	3	21000	6	51000	2	
Հրազդանի տ/2*	1	5250						
Աբովյանի տ/2*	3	15750 2	17000					
Եղվարդի տ/2*	27	141750	3	21000	4	34000	2	19
<i>Տավուշ</i>	9	47250	6	42000	5	42500		
Իջևանի տ/2*	6	31500	4	28000	3	25500		
Նոյեմբերյանի տ/2*	3	15750	2	14000	2	17000		
<i>ԸՆԴԱՄԵՆԸ</i>	111	582750	73	511000	56	476000	11	

* նշված տարածաշրջանում (տ/2) ընդգրկված է տվյալ քաղաքը և նախկին վարչական շրջանը

** նշված տարածաշրջանում (տ/2) ընդգրկված է միայն տվյալ նախկին վարչական շրջանը

Աղյուսակ N 3

1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի

Հ Ա Շ Վ Ա Ր Կ

**1988-1992 թթ. ԱՂԻԲԵԶԱՆԻՑ ԲՈՒՆԱԳԱՂԹԱԾ ԱՆՁԱՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ
ՊԱՀԱՆՁՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ**

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ (ՍԵՐՏԻՖԻԿԱՏ) ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Մարզի , այդ թվում քաղաք ի և տարա ծաշրջ անի անվան ումներ ը	Ընտանիքների կազմը՝ անձերով																		Ըն դ ա- մեն նր , ըն տ ա- նի ք	Ընդ ա- մեն ը՝ պա հան ջ- վող ֆին ան- սակ ան միջ ոց- ներ ը
	1-2 անձից կազմված ընտանիքն եր			3-4 անձից կազմված ընտանիքն եր			5-6 անձից կազմված ընտանիքն եր			7-8 անձից կազմված ընտանիքն եր			9-10 անձից կազմված ընտանիքն եր			11-12 անձից կազմված ընտանիքն եր				
	թ ի վ ը	մեկ սենյ ակ ա- նոց բնա կա- րան ի վկա - յազ րի արժ եքը (Ա ՄՆ- ի դոլ ար)	ընդ մեն ը՝ պա հա նջ- վող գու- մա րը	թ ի վ ը	երկ ու- սենյ ակ ա- նոց բնա կա- րան ի վկա - յազ րի արժ եքը (Ա ՄՆ- ի դոլ ար)	ընդ մեն ը՝ պա հա նջ- վող գու- մա րը	թ ի վ ը	երե ք- սենյ ակ ա- նոց բնա կա- րան ի վկա - յազ րի արժ եքը (ԱՄ Ն-ի դոլ ար)	ընդ մեն ը՝ պա հա նջ- վող գու- մա րը	թ ի վ ը	չոր ս- սենյ ակ ա- նոց բնա կա- րան ի վկա - յազ րի արժ եքը (Ա ՄՆ- ի դոլ ար)	ընդ մեն ը՝ պա հա նջ- վող գու- մա րը	թ ի վ ը	հին գ- սենյ ակ ա- նոց (3+ 2) բնա կա- րան ի վկա - յազ րի արժ եքը (Ա ՄՆ- ի դոլ ար)	ընդ մեն ը՝ պա հա նջ- վող գու- մա րը	թ ի վ ը	վեց- սենյ ակ ա- նոց (3+ 3) բնա կա- րան ի վկա - յազ րի արժ եքը (Ա ՄՆ- ի դոլ ար)	ընդ մեն ը՝ պա հա նջ- վող գու- մա րը		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
Վայոց Ձոր	9		148 84	3		837 0	2		744 0										14	306 94
Եղեգն աձորի տ/շ*	5	186 0	930 0	3	279 0	837 0	2	372 0	744 0										10	251 10
Վայքի տ/շ*	4	139 6	558 4																4	558 4
Մյուսի	8		895	4		837	1		278	3		873							14	209

	0	36	9	96	2	56		0									4	918
Կապա նի տ/2*	1 3	114 4	148 72	1 5	171 6	257 40	2 8	228 6	457								30	451 88
ք. Քաջար ան	3	716	214 8														3	214 8
Գորիս ի տ/2*	4 8	116 4	558 72	2 7	174 6	471 42	1 0	232 8	232 80	3	291 0	873 0					88	135 024
Մեղրո ւ տ/2*	9	100 0	900 0	4	150 0	600 0											13	150 00
Միսիա նի տ/2*	7	109 2	764 4	3	163 8	491 4											10	125 58
Արմավ իք տ/2*	1 1 4		250 624	5 4		186 336	2 5		963 76	3		193 60					19 6	552 696
Արմավ իքի տ/2*	3 1	178 0	551 80	1 0	267 0	267 00	6	356 0	213 60								47	103 240
ք. Մեծամ որ	2 6	122 4	318 24	1 6	183 6	293 76	1 2	244 8	293 76	1	306 0	306 0					55	936 36
Էջմիա ծնի տ/2*	4 2	326 0	136 920	2 5	489 0	122 250	7	652 0	456 40	2	815 0	163 00					76	321 110
Բաղր ամյան ի տ/2**	1 5	178 0	267 00	3	267 0	801 0											18	347 10
Արար ատ	1 7 2		312 628	9 2		264 870	6 6		242 848	9		439 70	1	756 0			34 0	871 876
ք. Արար ատ	4 0	125 2	500 80	1 5	187 8	281 70	1 4	250 4	350 56	2	313 0	626 0					71	119 566
Վեդու տ/2*	2 4	124 0	297 60	9	186 0	167 40	9	248 0	223 20								42	688 20
Արտա շատի տ/2*	4 1	214 8	880 68	2 0	322 2	644 40	1 2	429 6	515 52	3	537 0	161 10					76	220 170
Մասիս ի տ/2*	6 7	216 0	144 720	4 8	324 0	155 520	3 1	432 0	133 920	4	540 0	216 00	1	756 0	756 0		15 1	463 320
Արագ ածոտն	5 7		930 68	3 0		649 92	1 5		389 52	1		618 0					10 3	203 192
Աշտա րակի տ/2*	2 4	247 2	593 28	9	370 8	333 72	3	494 4	148 32	1	618 0	618 0					37	113 712

Ծաղկ աձոր	6	6	36		4	52		2	76											864	
Հրազդ անի տ/շ*	6 0	120 8	724 80	3 5	181 2	634 20	2 2	241 6	531 52	2	302 0	604 0	1	422 8	422 8					12 0	199 320
Արոյ անի տ/շ*	1 9 9	326 0	648 740	9 9	489 0	484 110	4 8	652 0	312 960	4	815 0	326 00	1	114 10	114 10	1	130 40	130 40	35 2	150 286 0	
Եղվար դի տ/շ*	5 2	160 0	832 00	4 3	240 0	103 200	1 7	320 0	544 00	4	400 0	160 00								11 6	256 800
Տալուշ	3 4		424 84	1 4		260 76	1 0		258 08	3		894 0								61	103 308
Իջևան ի տ/շ*	7	160 4	112 28	3	240 6	721 8	4	320 8	128 32											14	312 78
Բերդի տ/շ*	7	114 8	803 6	1	172 2	172 2	1	229 6	229 6											9	120 54
ք. Դիլիջ ան	5	144 0	720 0	2	216 0	432 0		1	360 0	36 00										8	151 20
Նոյեմբ երյանի տ/շ*	1 5	106 8	160 20	8	160 2	128 16	5	213 6	106 80	2	267 0	534 0								30	448 56
Գեղար քունիք	3 0		342 56	1 4		230 94	7		115 84	1		170 0								52	706 34
Գավա ռի տ/շ*	4	119 6	478 4	1	179 4	179 4	2	239 2	478 4											7	113 62
Ճամբա րակի տ/շ*	2	680	136 0	1	102 0	102 0	3	136 0	408 0	1	170 0	170 0								7	816 0
Սևանի տ/շ*	2 2	121 6	267 52	1 0	182 4	182 40														32	449 92
Վարդե նիսի տ/շ*	2	680	136 0	2	102 0	204 0	2	136 0	272 0											6	612 0
ք. Երևան	9 5 5	562 5	537 187 5	3 8 7	812 5	314 437 5	9 9	106 25	105 187 5	15	131 25	196 875	1	187 50	187 50	1	212 50	212 50	14 58	980 500 0	
	1 8 9 2		728 226 3	9 0 4		470 860 5	3 6 3		207 363 5	52		370 865	5		468 34	2		342 90	32 18	145 164 92	

* նշված տարածաշրջանում (տ/շ) ընդգրկված է տվյալ քաղաքը և նախկին վարչական շրջանը

** նշված տարածաշրջանում (տ/շ) ընդգրկված է միայն տվյալ նախկին վարչական շրջանը

Աղյուսակ N 4

1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՆԹԵՐ ԱՆՇԱՐԾ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԳՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2003 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

Համայնքներ		Մեկ քառ. մետրի արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	Մեկ-սենյականոց բնակարանի զինը (45 քառ. մ)	Երկու-սենյականոց բնակարանի զինը (65 քառ. մ)	Երեք-սենյականոց բնակարանի զինը (85 քառ. մ)	Չորս-սենյականոց բնակարանի զինը (105 քառ. մ)	Հինգ-սենյականոց /2+3/ բնակարանի զինը	Վեց-սենյականոց /3+3/ բնակարանի զինը
Երևան		125	5625	8125	10625	13125	18750	21250
Մարզեր	Քաղաքներ	մեկ քառ. մետրի արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	մեկ-սենյականոց բնակարանի զինը (40 քառ. մ)	երկու-սենյականոց բնակարանի զինը (60 քառ. մ)	երեք-սենյականոց բնակարանի զինը (80 քառ.մ)	չորս-սենյականոց բնակարանի զինը (100 քառ. մ)	հինգ-սենյականոց /2+3/ բնակարանի	վեց-սենյականոց /3+3/ բնակարանի
1	2	3	4	5	6	7	8	9
Արագածոտն	Աշտարակ	61.8	2472	3708	4944	6180		
	Ապարան	27.0	1080	1620	2160			
	Թալին	24.5	980	1470	1960			
Արարատ	Արտաշատ	53.7	2148	3222	4296	5370		
	Մասիս	54.0	2160	3240	4320	5400	7560	
	Վեդի	31.0	1240	1860	2480			
	Արարատ	31.3	1252	1878	2504	3130		
Արմավիր	Էջմիածին	81.5	3260	4890	6520	8150		
	Արմավիր	44.5	1780	2670	3560			
	Մեծամոր	30.6	1224	1836	2448	3060		

Գեղարքունիք	Սևան	30.4	1216	1824				
	Գավառ	29.9	1196	1794	2392			
	Վարդենիս	17.0	680	1020	1360	1700		
Լոռի	Վանաձոր	60.3	2412	3618	4824			
	Ստեփանավան	32.1	1284	1926	2568			
	Սպիտակ	23.6	944	1416	1888			
	Ալավերդի	25.1	1004	1506	2008	2510		
	Տաշիր	19.0	760	1140	1520			
Կոտայք	Աբովյան	81.5	3260	4890	6520	8150	11410	13040
	Նոր Հաճն	51.4	2056	3084	4112	5140		
	Բյուրեղավան	34.9	1396	2094	2792 4886			
	Եղվարդ	40.0	1600	2400	3200	4000		
	Հրազդան	30.2	1208	1812	2416	3020	4228	
	Ծաղկաձոր	74.9	2996	4494	5992			
	Զարենցավան	30.6	1224	1836	2448	3060		
Շիրակ	Գյումրի	68.2	2728	4092	5456	6820		
	Արթիկ	24.9	996	1494				
Սյունիք	Գորիս	29.1	1164	1746	2328	2910		
	Կապան	28.6	1144	1716	2288			
	Սիսիան	27.3	1092	1638				
	Մեղրի	25.0	1000	1500				
	Քաջարան	17.9	716					
Վայոց ձոր	Վայք	34.9	1396					
	Եղեգնաձոր	46.5	1860	2790	3720			
Տավուշ	Դիլիջան	36.0	1440	2160		3600		
	Իջևան	40.1	1604	2406	3208			
	Բերդ	28.7	1148	1722	2296			
	Նոյեմբերյան	26.7	1068	1602	2136	2670		

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2004 թվականի
մայիսի 20-ի N 747-Ն որոշման

Կ Ա Ջ Մ

1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՂՐԲԵԶԱՆԻՑ ԲՈՒՆԱԳԱՂԹԱԾ ԱՆՁԱՆՑ
ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ. Արբահամյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար (հանձնաժողովի նախագահ)

- Վ. Օսկանյան - ՀՀ արտաքին գործերի նախարար
- Վ. Խաչատրյան - ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
- ՀՀ քաղաքաշինության նախարար
- Մ. Վարդանյան - ՀՀ սոցիալական ապահովության նախարար
- Գ. Ասլանյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի տեղակալ
- Մ. Վարդանյան - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
- Գ. Եզանյան - ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան